

Հավելված

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2010 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 59Ա որոշման

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ծ Ր Ա Գ Ի Ր

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2011

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան	3
1. Կարգավորվող ոլորտների իրավիճակի և հիմնախնդիրների մասին	4
2. Կարգավորման օրենսդրական բարեփոխումներ	6
3. Լիցենզավորում, ներդրումային ծրագրերի որակական ցուցանիշների ուսումնասիրություն և սակագնային քաղաքականություն	9
4. Հասարակության հետ տարվող աշխատանքների բարելավում	10
5. Ներպետական և միջազգային համագործակցություն	10

Նախարան

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ՝ նաև՝ Հանձնաժողով) 2011թվականի տարեկան գործունեության սույն ծրագիրը, որն ամփոփ տեղեկություններ է պարունակում կարգավորվող ոլորտի և առկա հիմնախնդիրների մասին, սահմանում է Հանձնաժողովի գործունեության, ինչպես նաև կարգավորման քաղաքականության և տնտեսական մրցակցության մշակույթի ներդրման հիմնական ուղղությունները:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցության կարգավորման քաղաքականությունը երկրի տնտեսության դինամիկ զարգացման հիմնական ուղղություններից է:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, հիմնականում հաղթահարելով տնտեսության անցումային և ճգնաժամային շրջանների դժվարությունները, թևակոխել է սոցիալ-տնտեսական զարգացման որակապես նոր փուլ, առկա են երկրի կայուն տնտեսական զարգացման միտումներ, որոնք պայմանավորված են ինչպես մասնավոր հատվածի զարգացմանն ուղղված համալիր միջոցառումներով, այնպես էլ տնտեսական գործունեության համար անհրաժեշտ օրենսդրական դաշտի և մրցակցային միջավայրի ձևավորմամբ:

Սույն ծրագիրը կազմելիս Հանձնաժողովը հիմնվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսության իրավիճակի վերլուծության և նախորդ տարիների ընթացքում ձեռք բերած փորձի վրա: Մշակման ընթացքում մեծ նշանակություն է տրվել նաև Հայաստանի Հանրապետության համապատասխան հանձնաժողովների հետ իրականացված համատեղ քննարկումների արդյունքում նրանց կողմից ներկայացված առաջարկներին ու խորհրդատվությանը, ինչպես նաև համագործակցության համաձայնագրերով ամրագրված համագործակցության ուղղություններին:

2011 թվականը կլինի հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության դաշտը կարգավորող օրենսդրական փոփոխությունների ու այդ փոփոխությունների կիրառման, ինստիտուցիոնալ զարգացումների խթանման ու տեղեկացվածության մակարդակի բարձրացման, տնտեսական մրցակցության պաշտպանության, ձեռնարկատիրության զարգացման, սպառողների շահերի պաշտպանության, ֆինանսական ու մարդկային ռեսուրսներով համալրման և որակյալ մասնագետների ներգրավման, ներգրավված աշխատակիցների որակավորման բարձրացման տարի:

Ծրագրի գերակա ուղղություններն են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ամբողջ տարածքում տեղական արտադրության դինամիկ զարգացմանը նպաստելը, սակագնային ու տնտեսական մրցակցության բնագավառներում արդարացի, մարդկային արժեքների վրա հիմնված ու հիմնավորված քաղաքականության վարումը, կառույցի նկատմամբ հանրության ու սպառողների վստահության ամրապնդումը: Դա իրականություն դարձնելու համար անհրաժեշտ է զարգացնել, էլ ավելի ազատականացնել մրցակցային միջավայրն ու տնտեսական դաշտը, որոնք էլ իրենց հերթին կնպաստեն ձեռնարկատիրության զարգացմանը և ներդրումների խթանմանը:

Կարգավորվող ոլորտների իրավիճակի և հիմնախնդիրների մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը, իրականացնելով էներգետիկայի, հեռահաղորդակցության, տնտեսական մրցակցության պաշտպանության, փոստային կապի, տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների սահմանման և վերանայման մասով) բնագավառների ու ջրային համակարգի կարգավորումը, նպատակ ունի իր իրավունքների և պարտականությունների իրականացմամբ հավասարակշռել սպառողների ու հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը, կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը, կարգավորվող դաշտի թափանցիկության ապահովմանը և խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

Չմանրամասնելով կարգավորման հիմնական սկզբունքները և կարգավորվող բնագավառների իրավիճակը (տեղեկանքը կցվում է) Հանձնաժողովը ծրագրել է իրականացնել հետևյալ միջոցառումները:

Տնտեսական մրցակցության պաշտպանություն

Այս ոլորտի ծրագիրն իրենից ներկայացնում է Հանձնաժողովի կողմից իրականացվող հաջորդական միջոցառումների համակարգ, որոնք ուղղված են մրցակցության պայմանների ապահովմանը, բնակչության սոցիալական վիճակի բարելավմանը և օպերատիվ ձևով անդրադառնում են երկրում տնտեսական իրավիճակի փոփոխություններին:

Այդ միջոցառումները Հանձնաժողովը 2011 թվականին ծրագրում է իրականացնել տնտեսական մրցակցության քաղաքականության հետևյալ գերակա ուղղություններով.

Ապրանքային շուկաների ուսումնասիրություններ, որոնց միջոցով կպարզվեն.

- *ապրանքային շուկաների ծավալները, ապրանքային և աշխարհագրական սահմանները,*

- *շուկաների կենտրոնացվածության աստիճանը, շուկա մուտք գործելու խոչընդոտները,*

- *պետության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականության ազդեցությունն այդ*

շուկաների վրա:

Ուսումնասիրության ընթացքում հատուկ ուշադրություն կդարձվի տնտեսվարող սուբյեկտների միջև **հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերմանը**: Համաձայնությունների հայտնաբերմանը, կանխարգելմանը, սահմանափակմանն ու արգելմանն ուղղված հիմնական միջոցառումներն են.

- *ապրանքային շուկաներում գործող գների ուսումնասիրությունը,*

- *տնտեսվարող սուբյեկտների շուկա մուտք գործելու խոչընդոտների հայտնաբերումը և վերացումը:*

Կշարունակվի ապրանքային շուկաների հետազոտության միջոցով **գերիշխող դիրք** ունեցող տնտեսվարող սուբյեկտների բացահայտումը և դրանց կենտրոնացված ռեեստրի վարումը:

Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից գերիշխող դիրքի չարաշահման կանխարգելման, նախազուշացման և սահմանափակման համար նախատեսվող միջոցառումներն են՝

- գերիշխող ճանաչված տնտեսվարող սուբյեկտների գործունեության հետազոտում,
- չարաշահումների բացահայտում և վերացում,
- շուկա մուտք գործելու խոչընդոտների վերացմանն ուղղված քաղաքականության իրականացում:

Քայլեր կձեռնարկվեն **Չամակենտրոնացումների**, որոնք հիմնականում արտահայտվում են տնտեսվարող սուբյեկտների միաձուլմամբ, մեկ սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտների միջոցների կամ փայաբաժնի ձեռք բերմամբ, բացահայտման և կարգավորման համար:

Չանձնաժողովը կիրականացնի հետևյալ միջոցառումները.

-մասնակիցների ձեռնարկատիրական գործունեության համակարգման նպատակով տնտեսվարող սուբյեկտների միավորման արդյունքում ստեղծվող կազմակերպությունների նկատմամբ վերահսկողության իրականացում,

-տարբեր ապրանքային շուկաներում համակենտրոնացումների բացահայտում, շուկայի վրա դրանց ազդեցության հետազոտում,

-գործողության մեջ դրված արգելված համակենտրոնացումների հայտնաբերում ու լուծարում:

Անբարեխիղճ մրցակցության բացահայտման ուղղությամբ Չանձնաժողովը լիազորված և շահագրգիռ այլ մարմինների հետ համատեղ վերահսկելու է ապրանքային նշանների կեղծման, նմանակման, ֆիրմային անվանումների ապօրինի օգտագործման և ազնվության, բարեխղճության, արդարության սկզբունքների խախտումների դրսևորումները:

Նշված գործողությունների իրականացման համար Չանձնաժողովը ծրագրում է հետևյալ միջոցառումները.

Միջոցառում

Ժամկետ

- | | |
|--|-----------------|
| 1. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի ստեղծում | Տարվա ընթացքում |
| 2. Ապրանքային և ծառայությունների շուկաների ուսումնասիրություն և վերլուծություն (հակամրցակցային համաձայնություններ, գերիշխող դիրքի չարաշահում, օրենքով արգելված համակենտրոնացումներ և անբարեխիղճ մրցակցություն) | Տարվա ընթացքում |
| 3. Ապրանքային շուկաների տնտեսական մրցակցության իրավիճակի գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի ստեղծում և ընդլայնում | Տարվա ընթացքում |
| 4. Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծություն՝ բնակչության կողմից սպառման կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքների ապրանքային շուկաներում տնտեսական մրցակցության իրավիճակի շարունակական դիտանցում և գնահատում | Պարբերաբար |
| 5. Հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերում և դադարեցում. | Պարբերաբար |

- իրացման կամ ձեռքբերման խտրական և (կամ) տարբերակված գների հայտնաբերմանն ուղղված դիտանցում և գնահատում

- ապրանքի գնի չհիմնավորված բարձրացման, իջեցման կամ պահպանման բացահայտմանն ուղղված դիտանցում և գնահատում

- մինևույն ապրանքային շուկայի որոշակի տարածքներում, որոշակի ծավալներով, տեսականիով, սպառողների կամ մատակարարների խմբերով ապրանքների շրջանառության սահմանափակման դեպքերի ուսումնասիրություն

- համաձայնեցված գործողությունների արդյունքում տնտեսվարող սուբյեկտների կողմից շուկայի մուտքի խոչընդոտների կամ շուկայից տնտեսվարող սուբյեկտներին դուրս մղելու փաստերի և այլ գործողությունների բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն

6. Տնտեսվարող սուբյեկտի կողմից ներկայացված տեղեկատվության արժանահավատության պարզում, տնտեսվարող սուբյեկտի փաստացի գործունեության բացահայտում: Օրենքով սահմանված կարգով հետազոտության, ստուգման, ուսումնասիրության և (կամ) դիտանցման իրականացում

Պարբերաբար

7. Հասարակության տեղեկացվածության բարձրացում.

Ամենամսյա

- զանգվածային լրատվության միջոցներով Հանձնաժողովի աշխատանքների պարբերական լուսաբանում

- զանգվածային լրատվության միջոցներով օրենքի դրույթների մեկնաբանությունների ներկայացում

8. Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների, զանգվածային լրատվամիջոցների, դիմումների հիման վրա ապրանքային շուկաներում ուսումնասիրությունների իրականացում

Սահմանված ժամկետներում՝ ըստ տեղեկատվության ըստ ներկայացման

9. Իրավական ակտերի և պայմանագրերի փորձաքննությունների անցկացում

** Նշված յուրաքանչյուր միջոցառում ներառում է պարտադիր կատարման համալիր գործողություններ:*

Կարգավորման օրենսդրական բարեփոխումներ

Հանրապետությունում հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցության դաշտը կարգավորող օրենսդրության գործնական կիրառման ընթացքում Հանձնաժողովը բախվել է իր գործառույթների լիարժեք իրացումն սահմանափակող երևույթների: Օրենսդրական փոփոխություններն ուղղված կլինեն կարգավորվող–սպառող փոխհարաբերություններում ծագող վիճահարույց հարցերը նվազագույնի հասցնելուն, մատուցվող ծառայությունների մակարդակի բարձրացմանը, Հանձնաժողովի գործառույթների ու իրավասությունների ընդլայնմանը, օրենքի կիրարկման գործուն մեխանիզմների ստեղծմանը և կնպաստեն Հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ ազատ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ձևավորման գործում:

Օրենսդրության կատարելագործման համար անհրաժեշտ հիմնական քայլերն ուղղվելու են հետևյալ խնդիրների լուծմանը:

-Օրենքներում առկա անհստակությունների, տարընթերցումների, տարաբնույթ մեկնաբանությունների վերացումը:

-Ապրանքային շուկայում գերիշխող դիրքի որոշման որակական նոր չափանիշների ամրագրումը:

Գերիշխող դիրք ունեցող կհամարվեն նաև շուկայում իրական ազդեցություն ունեցող տնտեսվարող սուբյեկտները և կկատարվեն չափորոշիչների փոփոխություններ: Անհրաժեշտություն

է առաջանում սահմանել գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների լուծարման, միաձուլման, վերակազմավորման վերաբերյալ շահագրգիռ մարմինների կողմից Հանձնաժողովին տեղեկացնելու պարտականություն:

Մենաշնորհային և գերիշխող դիրքի բացահայտմանն ուղղված միջոցառումներ կիրականացվեն տարբեր ապրանքային շուկաներում և հսկողություն կսահմանվի նրանց նկատմամբ, որպեսզի բացառվեն գերիշխող կամ մենաշնորհային դիրքի չարաշահումները:

- Հանձնաժողովի ֆինանսավորման նոր մեխանիզմների ներդրումը: Հանձնաժողովի ֆինանսական անկախությունը ապահովելու համար նախատեսվում է «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարել, ինչը հնարավորություն կտա ընդլայնել Հանձնաժողովի կարողությունները, ապահովել առօրյա գործունեությունը՝ նպաստելով արդյունավետ գործող մարմնի կայացմանը: Հանձնաժողովը նախատեսում է նաև կարգավորման ոլորտում գտնվող ընկերությունների կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե մուտքագրվող գումարների աճ՝ լիցենզիաների (թույլտվությունների) վճարների, պետական տուրքերի, ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման վճարների, կարգավորման պարտադիր վճարների, ինչպես նաև տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում բացահայտված խախտումների համար կիրառվող պատասխանատվության միջոցների հաշվին: Ակնկալվում է, որ 2011 թվականին նշված աղբյուրներից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե կմուտքագրվի շուրջ 327 մլն դրամ, որը 36 մլն դրամով կգերազանցի 2010 թվականի սպասողական կատարողականը:

- Այլ օրենքներում համարժեք փոփոխությունների մշակումը:

«Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին» օրենքում լրացումներին և փոփոխություններին զուգահեռ անհրաժեշտություն է առաջանում լրացումներ կատարել նաև մի շարք այլ օրենքներում (հարակից օրենքներ): Հարակից օրենքներում նախատեսվող փոփոխությունները և լրացումները նպատակաուղղված կլինեն վերը նշված խնդիրների իրականացմանը, ինչպես նաև «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին» օրենքի և համապատասխան այլ օրենքների միջև առկա անհամապատասխանությունների վերացմանը:

Առաջարկվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով ամրագրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից սահմանված առաջին անհրաժեշտության (ռազմավարական) պարենային և ոչ պարենային ապրանքային շուկաներում իրացման կամ ձեռքբերման չիմնավորված գների կարգավորման կամ սահմանափակման իրավասություն:

Լուծում է պահանջում նաև թույլտվությունների տրամադրման և օգտագործման վճարների գանձման խնդիրը: Այս գործառույթն իրականացվում է Հանձնաժողովի ընդունած իրավական ակտի համաձայն, ինչը մշտապես խնդիրներ է հարուցում թույլտվություն ունեցող անձանց և Հանձնաժողովի փոխհարաբերություններում: Անհրաժեշտ է նշված դրույթն ամրագրել ճյուղային օրենքներով, որից հետո մշակել համապատասխան ենթաօրենսդրական ակտեր:

2011 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել նվազագույն պարենային զամբյուղում ընդգրկված ապրանքատեսակների ապրանքային շուկաների ուսումնասիրություններ: Ուսումնասիրություններ են անցկացվելու նաև մի շարք այլ ապրանքային շուկաներում, որոնք հիմնականում սոցիալական խնդիրներ են ծնում և հանրության լայն շերտերի մտահոգությունների տեղիք տալիս:

Հանձնաժողովը փորձ է անելու կիրառել գործնականում փորձարկված մեթոդներ՝ կապված պետական օժանդակության (աջակցության) տրամադրման հետ: Մասնավորապես, նախատեսվում է փոփոխություններ կատարել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում, որի համաձայն տնտեսական մրցակցության ոլորտում նոր ինստիտուտ կներդրվի, այն է՝ փորձ կարվի բացահայտել և արգելել տնտեսական մրցակցությունը սահմանափակող օժանդակությունների տրամադրումը: Նշված խնդրի լուծման համար անհրաժեշտ է, որպեսզի օժանդակություն տրամադրող մարմինները եզրակացություն ստանալու համար դիմեն Հանձնաժողովին:

Համապատասխան օրենքների փոփոխություններից և լրացումներից ելնելով Հանձնաժողովը կկատարելագործի գործող նորմատիվ իրավական ակտերը, կընդունի նորերը, որոնք անհրաժեշտ են կարգավորվող ոլորտներում գործող օրենսդրության կիրարկման համար:

- **Կարողությունների զարգացում:** Հանձնաժողովի արդյունավետ գործունեության և մրցակցային ոլորտում առկա բազմաթիվ խնդիրների լուծման համար անհրաժեշտ են բարձրորակ կադրեր: Հանձնաժողովի խնդիրը կլինի հստակ պահանջները բավարարող լավագույն կադրեր ընդունել աշխատանքի: Շուկայական տնտեսության զարգացմանը համահունչ տարեցտարի ավելացող աշխատանքային ծանրաբեռնվածությունը, պատասխանատվության մեծացող բեռը և ցածր աշխատավարձը պատճառ են դարձել որակյալ, բանիմաց և փորձառու կադրերի բացակայության, մինչդեռ անցած տարիները կբավարարեին արդյունավետ գործող թիմի ձևավորման համար: Համակարգում փորձագիտական ներուժ ստեղծելու համար անհրաժեշտ է խրախուսել և շահագրգռել լավագույն մասնագետներին, ներգրավել որակյալ մասնագետներ՝ նրանց գիտելիքները ծառայեցնել Հանձնաժողովի աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: Այս նպատակին հասնելու համար Հանձնաժողովը կաշխատի ստեղծել գրավիչ աշխատանքային միջավայր՝ համապատասխան պայմաններով ու համարժեք վարձատրությամբ:

Առկա խնդիրներն անհրաժեշտություն են առաջացնում էականորոն բարելավել վարչարարության մեխանիզմները՝ Հանձնաժողովի կազմակերպական կառուցվածքի և կադրային քաղաքականության, խրախուսման հստակ մեխանիզմների մշակման, կարճաժամկետ ու երկարաժամկետ վերապատրաստման ծրագրերի կազմակերպման միջոցով:

Հանձնաժողովի գործունեությունը **առողջ մրցակցության հաստատման** առումով կրելու է որակական նոր բնույթ, այն է՝ ապահովել մրցակցության կանոնների իմացություն և համարժեք ընթրնում, որն էլ ենթադրում է զանազան միջոցառումների իրականացում:

Հանձնաժողովը գտնում է, որ պետք է իրագեկ և մասնակից լինի տնտեսական քաղաքականության փոփոխություններին, եթե այն կարող է վնաս հասցնել շուկայի մրցակցային կառուցվածքին, գործարար վարքագծին, սպառողների շահերին և տնտեսական ցուցանիշներին:

Միևնույն ժամանակ Հանձնաժողովը նպատակ է հետապնդում ամբողջ հանրապետությունում ներդնել և զարգացնել «նրցակցային մշակույթ»: Այդ առումով աշխատանքներ կտարվեն ուսանողության և երիտասարդության շրջանում:

Լիցենզավորում, ներդրումային ծրագրերի որակական ցուցանիշների ուսումնասիրություն և սակագնային քաղաքականություն

Հանձնաժողովն իր իրավասությունների շրջանակում կշարունակի *լիցենզավորման* գործընթացը և կսկսի իրականացնել լիցենզավորման պայմանների կատարման և դրանց խստացման ուսումնասիրություններ: Առանձնապես ուշադրություն կդարձվի սպառողների և լիցենզավորված գործունեություն վարող մարմինների միջև պայմանագրային պարտավորությունների կատարման ընթացքին, իրենց պարտականությունները ոչ պատշաճ կատարող ընկերությունների նկատմամբ կկիրառվեն պատասխանատվության միջոցներ:

Սակագնային քաղաքականության իրականացման բնագավառում Հանձնաժողովը հիմք կընդունի համաշխարհային պրակտիկայում ընդունված՝ անհրաժեշտ հասույթի, ողջամիտ շահույթի և ծախսերի հիմնավորվածության ապահովման սկզբունքները, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռումը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով իրականացնելու արդիականացման և հեռանկարային զարգացման ծրագրեր:

Կատարվելու են գործող սակագների կառուցվածքի համապատասխան ուսումնասիրություններ, մշակվելու են սակագների կառուցվածքի կատարելագործման ուղղություններ և ներկայացվելու են դրանց փուլային ներդրման առաջարկություններ:

Առաջիկայում նախատեսվում են հեռահաղորդակցության բնագավառում սակագների վերանայման քննարկումներ՝ ի նպաստ սպառողների, և շահերի հավասարակշռման: Դա առաջին հերթին կապված կլինի ինտերնետային ծառայությունների, շարժական և անշարժ կապի սակագների և փոխկապակցման ծառայությունների վճարների կարգավորման հետ:

Կարգավորման կարևոր գործոն հանդիսացող կարգավորվող ընկերությունների *ներդրումային* ծրագրերը ենթակա են Հանձնաժողովի հետ համաձայնեցման: Համաձայնեցումը գործընթաց է, որի դեպքում խնդիր է դրվում ներդրումներն ուղղել նորարարական և արդյունավետ տեխնոլոգիաների կիրառմանը, սպառողներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը և խնայողությանը: Կարգավորվող ընկերությունների կատարած ներդրումների վերադարձի հետ կապված ծախսերը ներառվում են սպառողներին մատուցվող ծառայությունների սակագներում և ուղակիորեն ազդում են սակագների վրա ու, որպես կանոն, կարճաժամկետ հեռանկարում վեր են ածվում դրանց աճին նպաստող էական գործոնների:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Հանձնաժողովը մանրամասն կուսումնասիրի և վերլուծության կենթարկի կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերը և կպատրաստի համապատասխան վերլուծական տեղեկանքներ, ինչպես նաև կիրականացնի

կարգավորվող ընկերությունների կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների որակի գնահատման չափանիշների կատարելագործման և հսկողության աշխատանքներ:

Հասարակության հետ տարվող աշխատանքների բարելավում

Հանրության համար հետաքրքրություն ներկայացնող որոշումների մասին հաղորդագրությունները, Հանձնաժողովի գործունեությանն առնչվող պաշտոնական տեղեկատվությունը կիրառարակվեն մամուլում, կտարածվեն էլեկտրոնային լրատվամիջոցներով և փոստով: Կշարունակվի Հանձնաժողովի արդյունավետ փոխգործակցությունը ՁԼՍ-ների հետ: Հանձնաժողովի անդամները և աշխատակազմի մասնագետները հասարակական հնչեղություն ունեցող որոշումների, հարցերի շուրջ էլեկտրոնային լրատվամիջոցներով և տպագիր մամուլով պարբերաբար հանդես կգան ճանաչողական բնույթի հաղորդումներով, պարզաբանումներով և հարցազրույցներով: Կիրականացվի մամուլի հրապարակումների ամենօրյա վերլուծություն: Լրատվամիջոցների հաղորդած տեղեկությունները, ընկերություններից համապատասխան պարզաբանումներ ստանալուց հետո, կօգտագործվեն մատուցվող ծառայությունների որակի մասին Հանձնաժողովի նպատակային ուսումնասիրություններում:

Հանձնաժողովը ջանքեր կգործադրի թափանցիկ և հրապարակային գործունեության, զանգվածային լրատվամիջոցների հետ սերտ համագործակցության ճանապարհով նպաստելու հանրության իրազեկության աստիճանի բարձրացմանը, յուրաքանչյուր քաղաքացու տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացմանը: Հանձնաժողովը պաշտոնական ինտերնետային կայքով, թերթերով, հեռուստատեսությամբ կծանուցի Հանձնաժողովի նիստերի մասին, իսկ դրանց ավարտից հետո կմեկնաբանվեն ընդունված որոշումները, լրագրողների համար կկազմակերպվեն ճեպագրույցներ: Կշարունակվեն նաև պարբերաբար քննարկումները, մոնիթորինգների անցկացումը հասարակական կազմակերպությունների, սպառողների և կարգավորվող ընկերությունների մասնակցությամբ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների սպառողներին հուզող հարցերին և բողոքներին պատշաճ ընթացք տալու նպատակով:

Ներպետական և միջազգային համագործակցություն

Հանձնաժողովը առաջատար երկրների փորձն ուսումնասիրելու և կիրառելու նպատակով կշարունակի ակտիվ համագործակցությունը Հայաստանի Հանրապետության համապատասխան հանձնաժողովների և նրանց միջոցով նաև միջազգային կառույցների հետ: Հայաստանի Հանրապետության համապատասխան հանձնաժողովների հետ կնքված համագործակցության համաձայնագրերի շրջանակներում նախատեսվում է նաև Հանձնաժողովի մասնագետների մասնակցությունը միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպվող սեմինարներին և տարաբնույթ միջոցառումներին:

Հանրային ծառայությունների հիմնախնդիրների լուծմանը և մրցակցության պաշտպանության զարգացմանը նպաստելու առումով համագործակցությունը իրականացվելու է նաև հետևյալ ուղղություններով.

- Համագործակցություն ինստիտուցիոնալ նպատակով,

- Համագործակցություն տնտեսական մրցակցության մասին օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նկատառումով՝ ներառելով ժամանակակից մարտահրավերների հրամայականները,

- Ստորագրված համագործակցության համաձայնագրերով սահմանված պարտավորությունների կատարման արդյունավետության բարձրացում,

- Փորձի փոխանակում և լավագույն փորձի կիրառում:

Հանձնաժողովը նախատեսում է ընդլայնել և զարգացնել նաև ներպետական համագործակցությունը՝ սերտորեն համագործակցել պետական կառավարման մարմինների և այլ գերատեսչությունների հետ: Դա պայմանավորված է հավաստի տեղեկատվության ստացման, փորձի փոխանակման և տնտեսական մրցակցության քաղաքականության կիրարկման վերաբերյալ հասարակության և պետական այլ մարմինների կողմից ընկալման անհրաժեշտությամբ: Այդ տեսանկյունից կարևորվում է Հանձնաժողովի համագործակցությունը օրենսդիր, գործադիր և դատական համակարգի կառույցների հետ: Միաժամանակ բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր ապահովելու և մրցակցության քաղաքականության կիրարկման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Հանձնաժողովը կհամագործակցի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրության ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացման նախարարության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության, ինչպես նաև պետական շահագրգիռ այլ մարմինների հետ:

Այս ծրագրում նշված նպատակներին հասնելու համար Հանձնաժողովն ակնկալում է տեղական ինքնակառավարման մարմինների ու գործարար հանրության, սպառողների և հասարակական կազմակերպությունների համագործակցությունը: